

Տ. ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(22 սեպտեմբերի 2002 թ.)

*«Եւ եղիցի յաւոր յայնմիկ, հանգուսցէ զքեզ Տէր ի
ցաւոց եւ ի սրբամարտութենէ քունմէ»:
«Այն օրը Տէրը հանգստացնելու է քեզ քո ցաւերից
ու նեղություններից»:
(Եսայի ԺԴ 3)*

Միրելի հավաքացյալ, ահա այսպիսի խոսքերով է Եսայի մարգարեն դիմում իր ժողովրդին: Զիչ առաջ այս Սրբազան կամարների ներքո, սուրբգրային ընթերցվածների ժամանակ, ընթերցվեց Եսայի մարգարեի մարգարեության ԺԴ գլխի 3-17-րդ համարներում ամփոփված հավաձը, որի մեջ ընդգրկված են նաև այս խոսքերը:

Իրապես հրեա ժողովուրդը դառն ճակատագրով մի ժամանակաշրջան ապրեց, որի ընթացքին գերեվարվեց նաև Բաբելոնյան պետության կողմից, որը գրավում էր Միջագետքում, այժմյան Իրաքի փարածքում, և հզոր մի պետություն էր դարձել շնորհիվ իր կարարած ռազմական հաջող արշավանքների: Եվ ահա այդ պետությունը Ք. ա. 490-89 թթ. հարձակվեց նաև Իսրայելի վրա: Այդ օրերից սկսյալ փեղի ունեցավ հրեաների երկրորդ գերեվարությունը Եգիպտոսից հեկո, այս անգամ արդեն՝ Բաբելոն:

Այդ գերեվարությունը տևեց շուրջ 40 փարի, երբ, ի վերջո, 448 թ. Ք. ա. Իսրայելի ժողովուրդն ազատագրվեց իր բազմամյա գերությունից: Եվ Եսայի մարգարեի խոսքերը գալիս են սփոփելու, մխիթարելու հրեա ժողովրդին, թե հեռու չէ այն օրը, երբ Աստված ժողովուրդը պիտի ազատագրվի այդ գերությունից և պիտի հանգստանա իր կրած բազում զրկանքներից, փառապանքներից և ցավերից: Այս խոսքերը, այս ներշնչումը, ինչպես որ արձանագրված է Սուրբ Գրքի մեջ, Եսայի մարգարեն սրտացավ փեսիլքի միջոցով:

Տիրոջ գաղտնի խորհուրդներն ու խորհրդածությունները մշտապես իր ընտրյալներին ընծայվում են, բացահայտվում են այդպիսի փեսիլքների միջոցով, և եթե Աստվածաշունչը կարելի է այլ խոսքերով ևս բնորոշել, ապա՝ «Պատմություն Տեսլեսաց» Տեսիլքների Պատմություն, որում Աստված մշտապես հայտնվում էր Իր ընտրյալ ժողովրդին, Իր ընտրյալ զավակներին՝ առաջնորդելու Իր հոփը դեպի փրկություն, դեպի Ավետյաց երկիր: Աստված նաև փրկության որոնումների ճանապարհին մշտապես փեսիլքի միջոցով է հայտնել Իր ժողովրդին Իր կամքը:

Իրապես, սիրելի հավաքացյալներ, հրեա ժողովուրդը՝ Աստվածաշնչի ժողովուրդը, դառնությամբ լի մի կյանք ապրեց, և Աստվածաշունչն այդ պատմության արձանագրումն է, պատմություն, որը դրսևորում է, ներկայացնում է այդ ժողովրդի կյանքն իր վայրիվերումներով, ելևէջումներով, իր ամբողջ ներկայանակով՝ թափառումներից սկսյալ

մինչև պետականության կերպում, պետականության անկումից հետո՝ վերստին դեգերումներ, և այն շարք բանով մեզ հիշեցնում է պարամոնությունը մի ժողովրդի, որի զավակն ենք մենք:

Մեր ժողովուրդը ևս իր պարամոնության ընթացքին բազմաթիվ աղետներ, բազմաթիվ ավերածություններ, բազմաթիվ փառապանքներ ու զրկանքներ է տեսել, և թերևս չէր կարող շարունակվել մեր ժողովրդի ընթացքը դեպի հավերժություն, եթե չլինեին այն անձերը, ովքեր որ Տիրոջից ստացած փեսիլով առաջնորդեցին մեր ժողովրդին դեպի Տիրոջ՝ մեզ համար նախապարաստված ցանկալի և բաղձալի նավահանգիստը:

Ահա այդ ընկերայիններից մեկը՝ Գրիգոր Լուսավորիչը, փեսիլի մեջ տեսավ էջը Միածին Որդու, որ ունի ի ձեռնին հարվածեց ճիշտ այն վայրին, ուր ներկայիս կառուցված և կանգնեցված է Տիրոջ Իջման Սուրբ Սեղանը. և ինչպե՞ս է պարամիչը ներկայացնում Միածնի էջը Լուսավորչի փեսիլում: Տիրոջ Միածին Որդին իջավ ուռով հարվածելով գեղնին, և այնուհետև պարկերվեցին լուսավոր ուրվագծումները եկեղեցիների: Ինչո՞ւ է փեսիլի մեջ լույս: Լույս, քանզի փեսիլը ինքնին լույս է, լույսը Տիրոջ զգեստն է, իսկ Տերն ինքնին կյանք է, այսինքն՝ փեսիլն ինքը կյանքի պարզեման, կյանքի շարունակման երաշխիք և գրավական է դառնում մեր ժողովրդի կյանքում այս փեսիլով:

Նաջորդը, որ կրկին իր փեսիլով շարունակելի, հավերժագնա դարձրեց մեր ժողովրդի ճանապարհը և ուղին, փեսիլն էր Ս. Մեսրոպ Մաշտոցի, փեսիլը, որում ի վերուստ իրեն պարզեցին հանճար, իմաստություն՝ սքեղծելու հայոց գրերը և դրանով չհետապնդելով որևէ այլ նպատակ, այլ միայն Աստուծո խոսքը սեփական ժողովրդին սեփական լեզվով թարգմանելու առաքելությունը և որը նաև պարամոնության ընթացքին, ինչը բնորոշ է թերևս միայն երկնքից փրկված, երկնքից ընծայված պարզաներին, նաև բացի այն, որ հնարավորություն փվեց մեր ժողովրդին սեփական լեզվով թարգմանելու, Աստուծո թարգմանը լինելու, դարձավ նաև փարատեսակ դժվարությունների, փարատեսակ հարձակումների դեմ պայքանք ինչպես քաղաքական, այնպես էլ փնտեսական և այլևայլ ոլորտներում հիմնավոր և անխորտակելի մի պարավար:

Ուրիշ մի փեսիլը, որ վերստին առաջնորդեց, վերստին ամրապնդեց մեր ժողովրդի գոյությունն ու ինքնությունը, եղավ 15-րդ դարում, երբ Նայոց Նայրապետական Աթոռը փակավիճ գտնվում էր Կիլիկիո լեռների մերձակայքում՝ Միսում, և Թովմա Մեծոփեցի առնում մի վարդապետ, ով նաև պարամիչ էր, իր փեսիլի մեջ տեսավ կանթեղը, որ աստիճանաբար լուսավառում է, աստիճանաբար առաքացնում է իր լույսը, որը և պարամիչի բնորոշմամբ խորհրդանշում է, թե «կանթեղը՝ լույսն է Էջմիածնի, որը Տիրոջ ողորմությամբ վերստին աստիճանաբար պիտի բոցավառվի Նայրապետական Աթոռում՝ Սուրբ Էջմիածնում դրվելով»: Եվ Նայրապետական Աթոռը 1441 թ. վերստին հանգրվանում է իր բնուստի հիմնադրված վայրում: Եվ ահա, ինչպես որ ենթադրելի է, սիրելի հավաքացյալներ, այս փեսիլները, Աստուծոց ընծայված պարզաներն աղբյուր են հանդիսացել մեր ժողովրդի կյանքի ու գոյարևման, և մշտապես այդ փեսիլով է, այդ գաղափարականով և այդ նպատակով է, որ պիտի կարող լինենք ապրել ու գոյարևել:

Տեսիլն իր բուն արտահայտության մեջ որոշակի ձև ու կերպարանք ունեցող գրական ժանր և սքեղծագործություն է, սակայն այսօրվա մեր հասկացողության մեջ այն ա-

վելի է, քան ժանրը: Այն մեզնից յուրաքանչյուրի համար նպատակ է առաքելություն. և եթե երբեք որևէ ժողովուրդ դադարի փեսլապաշտ լինել, դադարի փեսիլք ունենալ այս կյանքում, նա նաև կդադարի գոյություն ունենալ և հավասարագոր գոյակցություն ապահովել այս արևի փակ՝ մյուս ազգերի կողքին:

Տեսիլքի նկատմամբ մեր ժողովրդի բուռն սերն ու փեսլապաշտությունն է, որ այսօր արդյունավորվել է Նայասփանի պերականության վերակերպումով և այդ վերակերպումը կրկին անգամ լինելով փեսիլքի արդյունքը, վերստին մեզ փեսլապաշտության է մղողում, որ այս անգամ մեր մեջ սնուցենք փեսիլքը՝ մեր պերությունը զորացնելու, մեր ժողովրդի կյանքը բարելավելու և մեր ժողովրդի հոգևոր-բարոյական արժեքներն առավել ևս պանծացնելու և պայծառացնելու:

Այս փեսիլքով է, որ Ազգիս Վեհափառ Նայրապետ Գարեգին Բ Ամենայն Նայոց Կաթողիկոսի փնտրիությամբ և Մեսրոպ արքեպս. Աշնյանի ջանքերով այսօր Վեհարանի հանդիսարահում կափարվելու է բացումը Անիի Մայր փանարի հիմնադրության 1000-ամյակի հոբելյանական փոնակափարությանց:

Մենք չենք կարող երբեք առաջ նայել, եթե հեփ չնայենք: Մենք չենք կարող լավ հասկանալ ապագան, եթե երբեք չկարողանանք գնահատել անցյալը: Եվ ահա այս է մփահագոյությունը, այս է փեսլականը և այս է գաղափարը, որ այսօր մենք հայացքով հեփ ենք դառնում շուրջ 1000 փարիներ՝ անդրադառնալու, հպարտանալու այն արժեքով, որն իր մեջ կրում է Անիի Մայր փանարը. ողբալու այն իրողությունների համար, որոնք պափանա դարձան հոյակերփի փլուզմանը. եզրահանգելու, թե ինչպես պեփք է անենք, որ նման փանարներն այլևս անփլուզելի և անխորփակելի լինեն: Նանդիսությունների շըրջանագծում հայ ուլփարվորներ Ախուրյանի ափից պիփի փեսնեն Անիի ավերակները, նորոգեն իրենց մեջ ուժն ու վճռականությունը՝ փանարը ամենահմա իր խոյանքով փեսնելու:

Արդարև, ինչպես բանասփեղծը կասեր, «փեսնեն Անին ու նոր մեռնեն»: Մակայն՝ ո՛չ ... մահ չկա: Մենք կյանք ունենք, և կյանքը գերագույն բարիք է երկնքից փրված, և այդ կյանքը մենք պիփի ծառայեցնենք ազգային մեր արժեքների ու սրբությունների վերապանծացման նվիրական փեսիլքին, քանզի ժողովուրդը, որ չունի փեսիլք, մահվան երախում է:

Ահա այս մփածումներով ցանկանում եմ հայցել Տիրոջ ամենագույթ ողորմությունն ամենքիս, որպեսզի մշտապես լցվենք մեր արժեքների նորոգումի զորացման ոգով՝ մեր անցյալը վերագնահատելու և ապագան կերպելու նվիրական գործին:

«Շնորհք, սեր և խաղաղութիւն Տեսն մերոյ և Փրկչիւն Յիսուսի Զրիստոսի Զրիստոսի եղիցի ընդ ձեզ և ընդ ամենեսեանս. ամէն»: